ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

27.11.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երևան

2025 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Մարիամ Գալստյանը, Արամայիս Փաշինյանը, Արմեն Մարուխյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2025 թվականի մշտադիտարկման արդյունքների ամփոփման վերաբերյալ հարցի քննարկում,
2. Անհամատեղելիության պահանջների խախտման շրջանակներում պաշտոնատար անձի պարզաբանման ներկայացում,
3. «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը սահմանելու մասին» ԿԿՀ որոշման նախագծի ներկայացում,
4. «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչներ սահմանելու և դրա հիման վրա հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին» ԿԿՀ որոշման նախագիծ,
5. Հայտարարագրման էլեկտրոնային համակարգի սպասարկման պայմանագիրը մեկ ամսով երկարաձգելու վերաբերյալ հարցի քննարկում:

Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը առաջարկեց նիստի հրապարակային հատվածի շրջանակներում քննարկել նաև Կառլեն Մկրտչյանի շահերի բախման առերևույթ խախտման վերաբերյալ հարցը (օրակարգի վեցերորդ հարց):

Օրակարգի առաջին հարցը ներկայացվեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից: Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ներկայացվեցին Էկոնոմիկայի նախարարի

տեղակալ Էդգար Զաքարյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովի նախորդ նիստին կայացված որոշման հիման վրա իրականացված հարցումների պատասխանները: Ներկայացված պարզաբանումների հիման վրա Հանձնաժողովը որոշեց վարույթ չհարուցել՝ հիմք ընդունելով ուսումնասիրության շրջանակներում պաշտոնատար անձի կողմից ներկայացված հիմնավորումները, որոնց գնահատմամբ փաստվել է, որ անձը փաստացի չի մասնակցել կազմակերպության կառավարմանը, ինչպես նաև ուսումնասիրության փուլում արդեն իսկ ձեռնարկել է անհամատեղելիության պահանջների խախտման վերացմանն ուղված անհրաժեշտ քայլեր՝ ապահովելով բաժնեմասի հավատարմագրային կառավարման փոխանցումը «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները բավարարող անձի:

Առաջին հարցի ընթացքում ներկայացվեցին նաև մշտադիտարկման շրջանակներում Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի վերաբերյալ կատարված հարցման պատասխանները՝ ստացված Ընկերությունից, որի արդյունքում Հանձնաժողովը որոշեց սպասելԱնահիտ Ավանեսյանին ուղարկված հարցման պատասխանին:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում որպես լիազոր ներկայացուցիչ, ինչպես նաև կառավարման մարմիններում հանդես գալու (տնօրենների խորհդի կամ ընդհանուր ժողովի) կապակցությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի մեկնաբանման հարցը: Վարչությունը առաջարկեց քննարկել նշված դրույթի լայն մեկնաբանման, ինչպես նաև Կառավարությանը համապատասխան գրությամբ հանդես գալու հնարավորությունները:

Մարիամ Գալստյանը նշեց, որ եթե պետական մասնակցությամբ տնօրենների խորհուրդ է, ապա հանրային ծառայողները և հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կարող են ներգրավված լինել (50% և ավելի բաժնեմասնակցության պարագայում), բացառությամբ Կառավարության անդամներից և Ինքնավար մարմնի անդամներից, բայց ընդհանուր ժողովի պարագայում օրենքի տառացի մեկնաբանման դեպքում նման հնարավորություն առկա չէ:

Մարիամ Գալստյանն առաջարկեց նորմը նպատակային նշանակությամբ մեկնաբանել և ֆիքսել, որ նշված պարագայում պետության ներկայացուցչության հարց է, և անձը պաշտոնից ելնելով է հանդես գալիս ընկերությունում ընդհանուր ժողովի անդամ:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովը որոշեց նորմը նպատակային նշանակությամբ մեկնաբանելու անհրաժեշտությունից ելնելով՝ դիմել ՀՀ Վարչապետին, առաջարկել հանձնարարական ուղարկել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝

ներկայացնելու անվանական ցանկ այն անձանց, ովքեր պետության մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանդես են գալիս որպես լիազոր ներկայացուցիչ կամ ներգրավված են կառավարման մարմիններում, նշվածից ելնելով առաջարկություն ներկայացնել՝ հանձնարարելու Արդադատության նախարարին կատարելու համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացվեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Արմեն Սմբատյանի կողմից ներկայացված պարզաբանման և հիմնավորող փաստաթղթերի արդյունքում Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիրությունը, միևնույն ժամանակ, Արմեն Սմբատյանին ներկայացնել համապատասխան առաջարկություն 2026 թվականին կնքվելիք հավատարմագրային կառավարման վերաբերյալ պայմանագիրը գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին:

Օրակարգի վեցերորդ հարցը ներկայացվեց Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից, որի արդյունքում Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկտչյանի և գնման գործընթացների արդյունքներով Համայնքապետարանի հետ պայմանագրեր կնքած Արտակ Աշիկյանի՝ ի դեմս «Աշիկյան Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, միջև փոխկապակցվածության արձանագրման բավարար հիմքեր առկա չլինելու հանգամանքը:

Օրակարգի չորրորդ հարցի շրջանակներում ներկայացվեցին Հայտարարագրերի վերլուծությունների վարչության կողմից Հանձնաժողովի անդամների դիտարկումների հիման վրա կատարված փոփոխությունները: Արդյունքում, Հանձնաժողովը որոշեց Նախագիծն ուղարկել շահագրգիռ կողմերին՝ կարծիքի, ինչպես նաև հրապարակել «e-draft» համակարգում՝ հանրային կարծիք ստանալու նպատակով:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացվեց Հայտարարագրերի վերլուծության վարչության կողմից, որի արդյունքում Հանձնաժողովը որոշեց Նախագիծն ուղարկել շահագրգիռ կողմերին՝ կարծիքի, ինչպես նաև հրապարակել «e-draft» համակարգում՝ հանրային կարծիք ստանալու նպատակով:

Օրակարգի հինգերորդ հարցը ներկայացրեց Հանձնաժողովի գլխավոր քարտուղարը, որի շրջանակներում ներկայացվեց 2021 թվականի նոյեմբերի 29-ին Համաշխարհային բանկի աջակցությամբ, բաց մրցույթի ընթացակարգում Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի կառուցման համար կնքած («Սիներջի ինթերնեշնլ սիսթեմզ» ընկերության հետ) ծառայությունների մատուցման, դրանից հետո նաև սպասարկման պայմանագրի ավարտից հետո մեկ անձից գնում կատարելու հիմքերը: Համաձայն ներկայացված հիմքերի՝ սպասարկման պայմանագրի շրջանակներում «Սիներջի ինթերնեշնլ սիսթեմզ» ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ է տարել, իսկ աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով

ծրագրային կոդերի ուսումնասիրությունների գործընթացը մեկ այլ մատակարար կազմակերպության կողմից կպահանջի լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ և ժամանակ, իսկ Համակարգի անխափան աշխատանքի համար՝ հրատապությունից ելնելով՝ առաջարկվեց սպասարկման պայմանագիր կնքել Ընկերության հետ: Ներկայացված հիմնավորումների հիման վրա Հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով և ՀՀ կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրատապության հիմքով պայմանավորված, մեկ անձից գնումների կատարման վերաբերյալ մեկ ամսով սպասարկման պայմանագիր կնքվել վերոնշյալ կազմակերպության հետ:

Օրակարգի հրապարակային հատվածում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էդգար Զաքարյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքներով վարույթ չհարուցել:
2. Կատարել հարցում Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին և սպասել հարցման պատասխանին:
3. Անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ նորմը նպատակային նշանակությամբ մեկնաբանելու անհրաժեշտությունից ելնելով՝ դիմել ՀՀ Վարչապետին, առաջարկել հանձնարարական ուղարկել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ ներկայացնելու անվանական ցանկ այն անձանցը, ովքեր պետության մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանդես են գալիս որպես լիազոր ներկայացուցիչ կամ ներգրավված են կառավարման մարմիններում, նշվածից ելնելով առաջարկություն ներկայացնել՝ հանձնարարելու Արդադատության նախարարին կատարելու համապատասխան օրենսդրական փոփոխություններ:
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Արմեն Սմբատյանի նկատմամբ ուսումնասիրությունն ավարտել միևնույն ժամանակ, Արմեն Սմբատյանին ներկայացնել համապատասխան առաջարկություն 2026 թվականին կնքվելիք հավատարմագրային կառավարման վերաբերյալ պայմանագիրը գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտության մասին:
5. Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկտչյանի նկատմամբ ուսումնասիրությունն ավարտել:
6. «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը» սահմանելու մասին ԿԿՀ որոշման նախագիծն ուղարկել շահագրգիռ

կողմերին՝ կարծիքի, ինչպես նաև հրապարակել «e-draft» համակարգում՝ հանրային կարծիք ստանալու նպատակով:

7. «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչներ սահմանելու և դրա հիման վրա հայտարարագրերի վերլուծություն իրականացնելու մասին» ԿԿՀ որոշման նախագիծն ուղարկել շահագրգիռ կողմերին՝ կարծիքի, ինչպես նաև հրապարակել «e-draft» համակարգում՝ հանրային կարծիք ստանալու նպատակով:
8. Մեկ անձից գնում կատարել «Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմս» ընկերությունից՝ կնքելով սպասարկման պայմանագիր մեկ ամիս ժամկետով:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**